վարտակով. 1703ին կը հեռանայ աթոռէն, Բ. անգամ կ'ստանձնէ իր պաշտօնը և կը վարէ 1704-1706, իբր Վեհիլ Երուսաղէմ կը ղրկէ 1706ին Սաղաթիէլ, Սրզրման անձերը և Էրզրումցի Ստեփանոս վրդ.: 1706 թուականով և 448 կնիքներով, Աղեքսանդր Ա. կթղի. (1706-1714) ուղղեալ յիշատակարանէ մը կը հասկցուի թէ՝ ի՛նչ վիճակի մէջ կը գտնուէր Ս. Յակոբի վանքը, երբ Աւետիք Պկ. իր անձին վրայ միացուց երկու պատրիարքութիւնները. «...և ետես (Աւետիք պտրք.) Ս. Յակոբայ վանքն ի յԵրուսաղէմ դմ քիսէ պարտուց ներքոյ գրաւեալ՝ որք թուլամորթ առաջնորդք, և չար իշխանք արարեալ զայն, և ելեալ ծերակոյտ քրիստոնէիւք, և վարդապետօք առ թագաւորն Ծանոյց նմա չար իշխանաց էհվալն՝ և զդմ քիսէ պարտն որ նոցա ձեռօք եղեալ: Եւ նոյն ժամայն եկ հրաման տիրեսցէ Աւետիք վրդն. զառաջնորդութիւնն յԵրուսաղիմայ և առցէ զառաջնոց հիսապն, և բարձի իշխանքն և արար այնպէս: Եւ ամենեւին հատումն? ձեռք չար իշխանացն որք կողոպտէին յամ ամէ զգանձն սուրբ յԵրուսաղիմայ, եւ աւելուր զպարտսն» (Կոռնիկ 1861 էջ 669): Աւետիք պտրք. ունի ինքնակենսագրութիւն մը (տպ. Մասիս, Արարատ 1874). ուր իր մասին կը գրէ այս տողերն. «մինչ գնալն ի Ս. Երուսաղէմ նաւավարն խաբէութեամբ էառ զմեզ և բերեալ զմեզ ի Ֆրանգստան». կը տարուի Մեսինա, անկէ Մարսիլիա, 1709ին կը փոխադրուի Պասթիլի բանտը, ուր կը գրէ վերոյիշեալ ինքնակենսագրութիւնը և ձեռագիր տաղերուն մէկ մասը՝ զոր տեսած է հայագէտ Տիւլորիէ՝ Ֆրանս. Արտաքին գործոց Նախարարութեան դիւաններուն մէջ, և որ կը մնան տակաւին հոն: Բանտէն կ'ազատի 1710ին, և կը վախճանի նոյն թուականին Փարիզի մէջ և կը թաղուի Սէն Սիւլբիս եկեղեցին: Աւետիք ունի նաև ուրիշ երգեր որ հրատարակուած են Բազմավէպի մէջ, 1884 և 1885 տարիներուն: 1710ին, Պասթիլի մէջ ընդօրինակած է Նոր Կտակարան մը 1668ին Ամսթէրտամ տպագրուած օրինակէն, ինչպէս նաև Պէլլարմինի քրիստոնէական վարդապետութիւնը. որ 1680ին թարգմանուած է Պետրոս Պողոսի ձեռամբ, եւ որ նոյն տարին Հռոմ տպագրուած է: Աւետիք ընդօրինակած է նաև Կալանոսի Տրամախօսութիւնը որ հրատարակուած է Հռոմ, 1645ին (CMa.): Ս. Յակոբի վանքին ընծայուած յիշատակներու մասին տեսնել (ՄՁ. թ. 532):